

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20
վիճակագրության պետական խորհրդի նիստի

14.12.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Շաբոյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ջ. Միրզոյան (նախագահի գլխավոր խորհրդական), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Ա.Դաշյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Ս. Հունանյան (աշխատանքի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. «ՀՀ ՎՊԽ 2005թ. դեկտեմբերի 28-ի թիվ 38-Ն, թիվ 42-Ն, թիվ 43-Ն և թիվ 46-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և ՀՀ ՎՊԽ 2005թ. դեկտեմբերի 28-ի թիվ 39-Ն, թիվ 40-Ն և թիվ 41-Ն որոշումներն ուժը կորցած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ս. Հունանյան/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «ՀՀ ՎՊԽ 2005թ. դեկտեմբերի 28-ի թիվ 38-Ն, թիվ 42-Ն, թիվ 43-Ն և թիվ 46-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և ՀՀ ՎՊԽ 2005թ. դեկտեմբերի 28-ի թիվ 39-Ն, թիվ 40-Ն և թիվ 41-Ն որոշումներն ուժը կորցած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ս. Հունանյան/

Որոշեցին՝

ՀՀ ՎՊԽ 2005թ. դեկտեմբերի 28-ի թիվ 38-Ն, թիվ 42-Ն, թիվ 43-Ն և թիվ 46-Ն որոշումներում կատարել փոփոխություններ համաձայն հավելվածների, իսկ ՀՀ ՎՊԽ 2005թ. դեկտեմբերի 28-ի թիվ 39-Ն, թիվ 40-Ն և թիվ 41-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչել:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ